

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ . — Մեր ուսումնասեր բոլորակիցներէն ոմանց ըրած հարցմունքներուն պատասխանները տալու չենք դանդաղիր . բայց հարկ է որ այժմէն ծանուցանենք թէ օգտակար չտեսնուած հարցմանց պատասխան չտալու ազատութիւնն իսկ կը պահենք . օգտակարներուն ալ պատասխանները եթէ երբեմն ուշացընենք, չենք ուզեր մեղադրուիլ :

Հ. Լուսինն այլ եւ այլ քառորդները օդոյն փոփոխութեանցը պատճառ կըլլան թէ ոչ :

Պ. Ամենեւին : Շատ մարդիկ տեսնելով տոմարներուն մէջ որ լուսնի ամէն մէկ քառորդներուն, եւ ծննդեանն ու լրման օրերը օդի փոփոխութիւն մը կայ գուշակուած, կը հաւատան, ու շատ անգամ խաբուած ըլլալն տեսնելով ալ խելք չեն սովորիր : Արակոյ գաղղիացի քաջ աստղաբաշխը բոլոր կենացը մէջ պատերազմեցաւ այս նախապաշարման դէմ, ու զօրաւոր պատճառներով իր կարծիքը հաստատեց : Իրաւ է որ երբեմն օրացուցին գուշակութեանը յարմար փոփոխութիւններ հարկաւ կըլլան ըստ չորից եղանակաց . բայց անով բաւական իրաւունք չունենար մէկն ըսելու թէ երկու իրեք օրէն նոր լուսնի է՝ անկէք է անձրեւ գալը . կամ թէ երեկ լրումն լուսնի էր, անոր համար օդը բացուեցաւ, եւ այլն : Միայն թէ այս ալ փորձուած բան կերեւնայ որ ընդհանրապէս արեւմտեան ու հարաւային հովիւրը լուսնի ծննդենէն մինչեւ վերջին քառորդը եղած միջոցին աւելի ստեպ կը փրչեն, որով ամպոտ ու անձրեւոտ օրերն ալ աւելի այն միջոցին կը հանդիպին . անոր ներհակ, արեւելեան ու հիւսիսային հովիւրը լուսնին վերջի քառորդին ատենները աւելի կը փրչեն, ուստի եւ այն միջոցին բաց ու պայծառ օրեր շատ կըլլան :

Հ. Մշտնջենաւոր շարժում գտնելը կարելի՞ բան է թէ ոչ :

Պ. Այս հարցմունքը պատասխանովը հանդերձ կը գտնենք գաղղիական օրագրի մը մէջ որ կըսէ . « Մշտնջենաւոր շարժում գտնելու ետեւէ ըլլալը « յայտնի խներութիւն է . եւ սակայն դեռ կը գրտնուին « նուին այնպիսի բարեմիտ մարդիկ որ այս բանիս համար խելք կը յոգնեցընեն, ատեն կան « ցընեն ու ըստրկէ կեցնեն :

« Մշտնջենաւոր շարժում գտնելը ըսել է Այն « պիսի գործիք մը կամ մեքենայ մը հնարել որ « մէկանգամ մը միայն անոր տրուած շարժմամբդ « միակերպ շարժի ու ոչ երբեք դադրի :

« Արդ այս բանս բացարձակապէս անկարելի է . « եւ պատճառը արեւու պէս յայտնի է . վասն զի « բնութեան մէջ մէկ մեքենայ մըն ալ չկայ որ մենք « անոր որչափ ոյժ որ կը հաղորդենք՝ նոյնչափ ալ « ինքը մեզի հաղորդէ :

« Ասոր համար է որ ջրաբաշխական մեքենա « ներուն մէջ մէկն ալ չկայ որ մէկ շարժման մը « անոնց տուած ուժին գոնէ տասնին ուրբ բանի « թերէ . եւ ամենեւն լաւ շոգեգործին՝ շոգիին իրեն « տուած ուժին հազիւ թէ երրորդ մասը կրնայ « ուրիշի հաղորդել :

« Դիտելու բան մըն ալ այս է որ մշտնջենաւոր « շարժման ետեւէ եղող անձինքը ամենքն ալ « իրենց համար շարժաբանութիւն մը հնարեր են, « եւ ուժաբանութեան վրայ եղած վերջին ու նոր « նոր գրումաքներուն ամենեւին տեղեկութիւն « չունին : Թէ որ դիմացիներն ալ իրենց պէս « տգէտ են՝ կրնան անոնց զարմանք պատճառել « քանի մը ծուռումուռ ուսումնական բառեր գոր « ծածկելով . բայց շարժաբանութեան վրայ թէ որ « քննութիւն մը պէտք ըլլայ անցընել, մեր դպրո « ցաց աշակերտներուն առջեւ անգամ չեն կր « նար դիմանալ :

« Դաղդիոյ գիտութեանց ձեւարանը ինչ գը « րուածք ալ ընդունի մշտնջենաւոր շարժման « զիւտին վրայ՝ ամենեւին չկարդար, մէկդի կը « ձգէ : »